

ՅԱՐԵԼՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ 1897 թ. ՓԵՏՐՈՒԱՐ.

ԱՆԱՆԻԱ ՄՈԿԱՅԻ

Անանիա կաթողիկոսը ծննդեամբ Մոկաց Փաս գիւղիցն էր. «Տէր Անանէ ի Մոկաց գեղջէ, որ կոչի Փաս, [ամս] ԻՎ, ասում է մի անանուն ժամանակագրութիւն կամ գաւազանագրութիւն: * Ասողիկը և նրա հետեւութեամբ մեր միւս պատմիչները (Սամ. Անեցի, Վարդան, և այլն) Անանիայի կաթողիկոսութեանը տալիս են միայն 22 տարի. — Եւ զկնի նորա (=նկիսէ կաթողիկոս) տէր Անանիա Մոկացի, առաջնորդ սուրբ Աւետիսն Վարազայ, հայրապետ հայաստանեայց, ամս ԻՎ, ** Բարերազգարար Ասողիկն ունի Անանիայի մահուան թուականը. «Այլ տէր Անանիա լցեալ զաւուրս իւր բարոյք ծերութեամբ՝ ի ՆժԻԹ թուականին վախճանեցաւ: *** Իսկ ինքը Անանիան իւր Ա թղթում, որ հրատարակում ենք ներքեւում, տալիս է իւր զահակաւութեան առաջին տարին — Հայոց ՅՂ թուականը, Իւր թղթում Անանիան մի քանի անգամ մէջ է բերում իւր կաթողիկոսութեան տարիների հաշիւը ուրիշ թուերի բաղդատութեամբ, որով կատարեալպէս ապահով ենք այդ թուերի ճշտութեանը, Այսպիսով բերան Անանիա Մոկացու կաթողիկոսութեան տարիներն են ՅՂ — ՆժԻԹ, կամ Փրկչական՝ 941—965, Միշեւ այժմս՝ Ասողիկի վրայ հիմնուած՝ Անանիայի զահակաւութեան առաջին տարին համարում էր 943 թիւը:

Ասթողիկոսութեան առաջին և վերջին տարիները հաշուելով իրեն ամբողջ տարիներ՝ Անանիան 25 տարի զահակաւած է լինում, իսկ իրապէս՝ առ նուազն 23 ամբողջ տարի և մի քանի օր կամ մի քանի ամիս: Այսպիսով Անանուն ժամանակագրութեան տուած թիւը (ԻՎ տարի) աւելի ճիշտ է քան Ասողիկինը, Բայց կարող էր պատահել, որ նախնական օրինակում Ասողիկը ունեցած լինէր ԻԵ փոխանակ ԻՎ-ի. մի շատ սովորական և յաճախակի շփոթումներ է և է տեսնելի:

Ինչ և իցէ, մենք ունինք այժմս հաստատուն թուեր այս՝ տասներորդ դարի միշեւ օրս գրեթէ անշարժութեան մէջ մնացած՝ հեղինակի կեանքից, Անանիայի ծննդեան տարին յայտնի չէ, բայց բարոյք ծերութեանից՝ եղբակցնելով, որ նա մեռելիս 965 թուին առ նուազն պիտի լինէր 65 տա-

րեկան: Երեւն ճշուած կլինի տասներորդ դարի սկզբին կամ թերեւ իններորդի վերջերը:

Մանկութիւնը և երիտասարդութիւնը անց է կացրել Անանիան ամենայն հաւանականութեամբ Մոկաց գաւառի և Վասպուրականի վանքերում կամ ինչպէս ինքն է ասում՝ «Հոփուական և Ճգնողական միայնաօրութեամբ անեալք յամայն անապատաց և ի ծերպս վիմարնակս կրօնարնակ ընակութեամբ» (Ա թուղթ), Անեցակից և կենակից է եղել նրան միւս Անանիան, Նարեկացին, որն իւր Խոստովանութեան Գրում, ուղղուած ընդդէմ Թոնարակեցիների, ցուած սրտով զիմելով Անանիա Մոկացի կաթողիկոսին, հետեւեալ ակնարկութիւններն է անում, որոնք հաւատարապէս վերաբերում են երկուսին ևս. «Իրաւի անիրաւութեամբ և ծանուց զչ ծանաւիս, սննդակիցդ աւտարացեալ և ծառայի անաղեակ բարոյք և հաւատաց, նախահարբ և դաւաճաւ և աղգաւ և ախորժակովք և վարժիւք և կենակցութեամբ ի բնէ ի միտսին կրաւնիւք միակամ վարելով առաստուած և առմարդիկ կատարեալ և անխիթ հաւատով և անխիթի խորհրդականութեամբ ի ժամ վախճանի իմոյ ուրախ լինել ի տէր (տպ. ի սէր)՝ հոգեոր սիրովն ասուածոյ: *

Ասթողիկոս ընտրուելուց առաջ, ինչպէս անսանք Ասողիկի վկայութիւնից, Անանիան Վարազայ վանքի առաջնորդ էր, Բարձրանալով հայրապետական զահլ՝ հաւանականաբար առաջին տարին նստում էր Աղթամարում կամ թերեւ Վարազում, յետոյ կաթողիկոսարանը տեղափոխեց Հիրակաւան կամ Արգիշտի, Կոնէ այսպիսի մի բան է ասում Սամուէլ Անեցին. «Տէր Անանիա Մոկացին ամս ԻՎ, և ամս Աղթամար և ժէ ամ ի Վարազ եկացաւ, ** Իւր թղթներում չեն յիշում ոչ Աղթամարը ոչ Վարազը ոչ Արգիշտին, միայն այսչափն է երևում, որ իւր առաջին հրովարտակը (=կոնդակ), ուղղուած Աղուանից Սահակ կաթողիկոսին, գրել է Գագիկ Արժրուրի թագաւորի հաւանութեամբ և խորհրդով, ուրեմն և Վասպուրականում: Եթէ որդ տարին մեռնում է Գագիկը (943 թ.) և նրա փոխանակ թագաւորում է Գրիգոր Դերենիկը, Այդ թուին Անանիան ծանապարհ է ընկ-

* Հար Անանիայի Գիր Խոստովանութեան Արարատ, յոմուար, եր. 6, 1892.

Թէ այս Հայր Անանիան՝ Անանիա Նարեկացին է, Գրիգոր Նարեկացու (մոր) հօրեղբայրը, հաստատուեց նաեւ Գրիգ. Նարեկացու Նոր հրատարակուած թղթովը, նոյնպէս ընդդէմ Թոնարակեցիների: Բազմապէս, 1895.

** Սամ. Ան. 1893, Վաղարշապատ, եր. 99: Սամուէլի տուած տեղեկութիւնը կասկածելի է, 3 եւ 17 թուերի գումարն անում է 22 տրեմս Սամուէլը կարծում է, որ Անանիան իրեն կաթողիկոս նստում էր Աղթամարում և Վարազում, մինչդեռ Մոկացու Թղթերից երեւում է, որ նա իւր հայրապետութեան տարիների մեծ մասը անց է կացրել Եփրակ գաւառում:

* Այս թէն սխալաշատ, բայց հետաքրքրական ժամանակագրութեանը գտնում է Գերգ. Շուր. Ա 102 ծանագում: Այս ժամանակագրութեան մէջ կաթողիկոսների աւագանագրութիւնն հասնում է մինչեւ Պետրոս Գիտարսի զահակաւութեան 25-դ տարին: Այս Անանուն ժամանակագրութեան մասին ուրիշ պատեմ աղբիւր:

** Ասողիկ Գ Նանդէս, գլ. Է: Հրատ. 1885.

*** Նոյն, գլ. Է:

նում զեպի Սիւնիք և այնտեղից դառնում է Հիւրակ, Այնուհետեւ լինում է Հիւրակում:

949 թուին (84Լ) արդէն վերջացրած է լինում նա իւր երկրորդ ճանապարհորդութիւնը Հիւրակից զեպի Աղուանքի և այնտեղից Սիւնիքի և Սիւնիքից՝ ձիով ձմեռ ժամանակ՝ վերադառնում է Հիւրակ:

Այս 949 թուին է, որ Անանիա կաթողիկոսը առաջին անգամ տեսնում է Աղուանից Պատմութիւնը և քաղուածքներ է անում նրանից:

Իւր կաթողիկոսութեան 13-դ տարին մեռնում է Արաս թագաւորը և դա՛հ է բարձրանում Աշոտը (953):

Աղուանից և Սիւնեաց հետ կրօնական պայքարը տևում է 84Լ թուից մինչև նե: թուականը (942-958):

Այս 958 թուին մեռնում է Գրիգոր Գերեւիկը և նրան յաջորդում է Համազասպ թագաւորը: Այս թուին է վերջանում Անանիա կաթողիկոսի երրորդ ճանապարհորդութիւնը զեպի Սիւնիք և Բաղք:

Այս 958 թուին է գրուած Անանիայի Ա Թուղթը, երբ յաջողութեամբ վերջացան Աղուանից և Սիւնեաց կրօնական վեճերը:

Բ Թուղթը, որով բանադրում Անանիա կաթողիկոսը Խոսրով Անձեազուն, գրուած է Անանիայի գահակալութեան 14-դ տարուց, այն է՝ 954 թուից (նԳ) յետոյ, Խոսրով Անձեազուն՝ այսպէս անուանուած՝ ապստամբութիւնը լինում է այս 954 թուին:

Անանիայի Գ և Դ Թղթերը, նոյնպէս և Յակոբ Ծպատեցու Թուղթը, որոնք երեքն էլ կրօնական վիճարանութիւններ են ուղղուած ընդդէմ Խոսրով Անձեազուն, աւելի կանուխ են ժամանակով քան թէ Անանիայի Բ Թուղթը, որովհետեւ վերջինիս մէջ Խոսրովն արդէն մեռած է և բանադրուած, մինչդեռ առաջիններում Խոսրովը դեռ կենդանի է: Սակայն բոլոր այդ Թղթերը յետոյ են 954 թուից և կանուխ 965 թուականից: ** Այս Թղթերին ժամանակակից է և Անանիա Նարեկացու Խոստովանութեան Գիրքը, որ չէ կարող 965 թուա-

կանից յետոյ լինել, եթէ իսկապէս ինչպէս մենթագրել ենք, նա ուղղուած է Անանիա Մակրուն:

Մոկացու մեր ձեռքն հասած չորս Թղթեր տեղեկանում ենք մենք այդ գործունեայ կաթողիկոսի կեանքին: Նրա հայրապետութեան առաջին 18 տարիներում (941-958): * Մեռնելով 965 թուականից նա Արգինայում, որտեղ ունէր կաթողիկոսարան, ըստ հետեւեալ վկայութեան Ասողիկ «Յաւուրս Սիւս—Ժանայ Եռնաց կայսեր և թագաւորութեան Հայոց Աշոտի ի նԻԱ թուականի զինի Վահանայ և Ստեփանոսի, եկաց կաթողիկոս Հայոց տէր Խաչիկ եպիսկոպոս Արշարունեաց, քուրորդի տեառն Անանիայի, ** որ միապետեալ խաղաղացոյց զաշխարհս Հայոց ամն ժԹ, եւ նորոգեալ տուն կաթողիկոսարանին ի Հիւրակ գաւառի զիւղաքաղաքին Արգինայ, յեղերս Ախուրեանգետոյ, ի հանգստարանի տեառն Անանիայի Հայոց վերադիտողի» (Գ, գլ. Թ.):

Բացի մեր ձեռքն հասածներից՝ Անանիան ունեցել է նոյն կրօնական վեճերին վերաբերեալ եւս քիչ բազմաթիւ Թղթեր, կամ ինչպէս ինքն է ասուած՝ «անբաւ թղթագնացութիւն» (Ա. Թ), որ այժմ կորած են, երեւի հէնց սկզբից մտած չլինելով Գիրք Թղթոց կոչուած ժողովածուների մէջ:

Ոչ միայն կրօնական վեճերի, այլ ընդհանրապէս հայ պատմութեան և մատենագրութեան համար մեծ նշանակութիւն ունին Անանիայի Թղթերը մանաւանդ դրանցից առաջինը, Հաստատուն և ճիշդ թուականներ, բազմաթիւ թանկագին տեղեկութիւններ Բագրատունիներին, Վասպուրականի թագաւորներին վերաբերեալ, Սիւնիքի, Բաղաց աշխարհի Աղուանիքի մասին այնպիսի մանրամասնութիւններ որ յայտնի չեն մեզ ուրիշ աղբիւրներից՝ ահա այդ Թղթերի պատմական արժէքը կազմող կետերը:

Չուտ մատենագրական տեսակետից էլ՝ շատ կարեւոր տեղեկութիւններ է տալիս մեզ Անանիայի Թղթերում: Այս միակ աղբիւրն է, որի մէջ գտնուած ենք տեղեկութիւն Արամի մասին, տասներորդ դարի մինչև օրս անյայտ մնացած մի մատենագիր, որ ծաղկեց Խոսրով Անձեազունց առաջ: ***

Մոկացու և Անձեազուն յարաբերութեանց մասին թէև ունենք համառօտ տեղեկութիւն Գան ձեռնագրուց և Օրբելեանից, սակայն մինչև օրս այլ

* Աղուանից Պատմութեան հազարն յիշատակութիւնը Մոկացուն է: Միւս կողմից ինձ յայտնի է, որ Աղուանից պատմիչը իւր Ա գրքի առաջին գլուխները ընդօրինակել է Անդրէասի ժամանակագրութիւնից: Իսկ Անդրէասը, ըստ մեր որոշման, չէ կարող 641 թուից առաջ լինել (տես «Մուրճ» 1895, յունիս, սր. 819, ծնթ): Ուրեմն 641-949 թուերին է Աղ. Պատմութեան գրութեան ժամանակը: Մոկացու քաղաւածքները՝ Ղուան. Պատմութիւնից՝ անձնով մեզինք՝ հրատարակեց Արարատում Խաչ. վարդ. (Արարատ. 1896)

** = (Անանիայի մահուան թիւը):

* Մի անթուական եւ թնդատ արժանագրութեան մ. յիշուող «տէր Անանէն», հաւանականաբար այս Անանի Մոկացին է: Տես Երրակ, սր. 126, ծնթ.

** Խաչիկ Ա կաթողիկոսի հարազատ եղբայրն է Պետրոս Դեմողարծ կաթողիկոսը, երկուսն էլ Անանիա Մ. կացու քոնորդիւնները:

*** Արամի մասին տես նաեւ մեր Հայկական, Ը (Արարատ. 1894)

կարծիքն էր տիրում: որ բանագործող Խոսրովը, ինչպէս զեռ Զամէեանն էր ասում մի ամեն Խոսրով քորեպիսկոպոս էր* և ոչ Անձեւացին: Նոյն իսկ Խոսրով Անձեւացու և նրա որդու՝ Գրիգոր Նարեկացու՝ ժամանակն էլ այնպիսի թուականներով էր որոշում: որ Անձեւացին գրեթէ ժամանակակից չէր կարող լինել Անանիա Մոկացուն: ** Ըստ Զամէեանի և նրա հետեւութեամբ նորագոյն գրողների Գրիգոր Նարեկացին ծնունդ է 951-ին: Խոսրովը կրօնաւոր է զարձել մօտաւորապէս 961-ին: մի քանի տարի յետոյ եպիսկոպոսացել՝ և վախճանուել է 972-ին: Այս ենթադրական թուերը թէ ինչ աղբիւրներից են առնուած՝ այդ յայտնի չէ ինչ, բայց թէ անպայման սխալ են: այդ այժմս բոլորովին անկասկածելի է:

Այլ ևս առանց երկրայութեան է: որ բանագործած Խոսրովը նոյն ինքն Խոսրով Անձեւացին է: տասներորդ դարի համբաւաւոր և գիտուն և կեղեցական հեղինակը: *** Մոկացի կաթողիկոսն էր տուել նրան Անձեւացեաց թեմը՝ որում հաւատացեալ էր մեր նմա զփիճակն Անձաւացեացն: այր համեստ և գիտնաւոր և ալեօր ճերութեամբ զարգացեալ: (Բ. Թ. Գ.): Արեւմտ. եթէ չգիտենք Խոսրովի ծննդեան և մահուան թուերը: բայց այս հաստատ է: որ նրա եպիսկոպոսանալը 941 թուից **** յետոյ է և 950 (878) թուից առաջ: Այդ 950 թուին Խոսրովը արդէն եպիսկոպոս էր և գրեց իւր Պատարագի Մեկնութիւնը: ***** 954 թուին Մոկացու ասեղով: երբ Խոսրովը արդէն ճեր մարդ էր՝ ապստամբեց կաթողիկոսից: Արեւմտ Խոսրով Անձեւացու ծնունդը ամենաուշը կարելի է զնել տասներորդ դարի սկզբին: իսկ մահը 965 թուից ***** առաջ: որովհետեւ Անանիայի Բ. Թղթում Խոսրովն արդէն մեռած է:—չաւտ անգամ՝ ասում է Մոկացի կաթողիկոսը: աղաչեցինք նրան: որ դառնայ անուղղայ և մտախար խորհուրդներիցը: որ մինչև իսկ արտասուելով խնդրեցինք: սակայն չկամեցաւ ուղղուել: ուստի և ստիպուած եղանք Աստուծոյ հրամանից՝ կտրել հրեղէն սրովը և բաժինը կեղծաւորների հետ զնել (=բանագրել): որ և նոյն թօշակը (=բանագրութիւնը) տարաւ հետը հանդերձեալ կեանքը իրրեւ կորստեան պաշար: Այս պատճառով և ստիպուեցանք գրել այս մեական կտակը յետոյ եկողների համար: որ զգուշանան այդպիսի ընդ վայրագ ամառնութիւններից: (Բ. Թ. Գ.):

* Պատմ. Հայոց, Բ. 828.

** Նոյն տեղը, 859.

*** Տե՛ս „Հայկականք“, արդէն յիշուած:

**** Ան. Մոկացու գահակալութեան թուականը:

***** Տե՛ս Զարք. Հին Դար. եր. 518—19, յիշատակարան Պատարագի Մեկնութեան:

***** Մոկացու մահուան թուականը:

Այս հաշուով անհնարին է նաև Գրիգոր Նարեկացու ծնունդը զնել 951-ին: * Այլ էլ նա քսան և վեց տարեկան կարող էր լինել: այլ աւելի: երբ գրեց Նրբերգոցի Մեկնութիւնը 967-ին (ՆԺԶ):

950-ին և 951-ին Խոսրովը արդէն եպիսկոպոս էր: ուստի և Գրիգորը պէտք է ծնուած լինի այդ թուերից առաջ: Անհնարին է ժ-դ դարում կանամբի եպիսկոպոս ենթադրել Հայաստանում:

Նոյնպիսի սխալ է Անանիա Նարեկացու ծագելիւը: ըստ հին սփորութեան: զնել տասներորդ դարի սկզբներին: * Գրիգոր Նարեկացին մի անգամ Ան. Նարեկացուն անուանում է իւր պապի (մօր կողմից) և զբայր միւս անգամ՝ հօրեղբայր: Խօսելով Ան. Նարեկացու Թոնարակեցիների դէմ գրած Թղթի կամ Գրքի մասին՝ ասում է: զերջանիկ տեսան մերոյ Անանիայի զգարմանագիծ հակաճառութիւն նամակին *** զարանականս ասել: կամ անպատեհս կամ ոչ աստուծով խաւսեցեալ **** ... արդ զայստակ հաւրեղբայրն մեր և վարդապետ մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ՝ իրրեւ դատուծող քառագով՝ և անգամին իրր մատուռն նախամարտիկ տապալեաց զառասպելարան հայհոյութիւն անարկնեղոն Թոնարակեանց: Մի ուրիշ անգամ գրում է այսպէս: Նա Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրսեր բանասիրաց: որ զի դատեր և զբօր Հօր Անանիայի հոգեզարդ և մտաւարժ փիլիսոփայի: ***** Այս վերջին ասու-

* Հին Դար. Զարք. 520, 526:

** Հին Դար. Զարք. 515. տես նաեւ Զամէ: 2. Գարեգինի սխալներն մասնաւոր լինելով մեր նպատակը չէ այդ արդիւնաւատ հեղինակի թոյլ կողմերը ընդգծել: այլ սրտագրել ստանց քննադատութեան դասաբարձրի մէջ մտած խոշոր թիրիմացութիւնները: որոնցով բոլորովին զուր տեղը ծանրաբեռնում է աշակերտների յիշողութիւնը սխալ տեղեկութիւններով:

*** Անանիա Նարեկացու այս նամակը՝ մեր կարծիքով՝ է նրա Խոսրովանութեան Գիրք: 2. Սարգիսեան ընդունելով հանդերձ: որ Խոսրու Գիրք Ան. Նարեկացունն է: ենթադրում է սակայն: որ այս գաւթմանագիծ նամակը պիտի լինի ուրիշ գրուած: ակել ընդարձակ քովանդակութեամբ: Տե՛ս 2. Սարգ-ի սպառնացիները նրա Ռուսում: Մանիքէա-Պաղիկ Թոնր. աղանդ: Բազմաձև 1892—5. կայ նաեւ արտատպութիւն: Ի դէպ՝ ակելորդ չենք համարում նկատել: որ այդ Ռուսումնասիրութիւնը մի շնչակոյտ է հին և նոր: հետաքրքրական և հստակ: սխալ և ուղիղ տեղեկութիւն՝ երբ: կամայական և երբեմն անհնարին մերձեցումներով: Նոյնատիպներով: ընդլայնումներով: Ի՞նչ չափով պարունակում է կրօնական և դաւանաբանական եռանդ: եթէ չասենք մոլեռանդութիւն: Յսմանայ զէպս շատ է գիտական: հանդարտ և անաւատ քննադատութիւն լինելուց:

**** Այդ աստղը յգիտնականն: կամ յքննաւոր: Մուշեղն էր: Թոնարակեանս աղանդաւոր: երևում է Մոկացու նամակներից: որ Խոսրովը: ընչպէս և Արամի մեղադրում են նմանապէս իրրեւ յընդ վայրագ ամառնութեամբ: պարագոյններ:

***** Թիշատակարան: Մատենագր. Նարեկ: 1810 վե՛նետ. եր. 422:

Թեամբ՝ ուրեմն՝ Ան. Նարեկացին Գրիգորի պապի (մօր կողմից) եղբայրն էր:

Այս կրկին հակասական ցուցումները կարող են բացատրուիլ երկու տեսակի. կամ այն է՝ որ երկու Նարեկացի * Անանիաներ են եղել, որոնցից առաջինը Թոնտրակեցիների ղեմ գրողն է, միանգամայն և Խոսրով Անձեացու եղբայրը, և Գրիգորի հօրեղբայրը, իսկ երկրորդը՝ Գրիգորի պապի (մօր կողմից) եղբայրն է, եւ կամ թէ՛ մի միայն Անանիա է եղել Նարեկի վանահայր, ինչպէս և ունի ժամանակով շատ մօտիկ Ասողիկը, և այդ Անանիան Գրիգորի պապի եղբայրն է, ուրիշ խօսքով՝ Գրիգորի մօր հօրեղբայրը, որին ընտաներար Գրիգորն էլ կարող էր անուանել՝ հօրեղբայր, Այգպիսի ընտանեկան ասութեան ձև կամ սովորութիւն մենք էլ ունինք այժմս, մեր մօր կամ հօր հօրաբոլորը, մօրաբոլորը, քեռուն, պարզապէս անուանելով՝ մօրաբոլոր, հօրաբոլոր, քեռի:

Արեւմտ ընդունելով, որ տասներորդ դարում եղել է միայն մի Անանիա, Նարեկի վանական, նրա Խոստ. Գրիգ տեղեկանում ենք, որ նա սննդակից և կենակից է եղել Ան. Մովսէսին և մերձի մահ փիճակում ** ոչ ինքնարեւարտ, այլ կատարելով կաթողիկոսի պահանջը, անիծել է Թոնտրակեցիներին, Բայց չէ մտնել Մովսէսից առաջ, ինչպէս այդ կարելի էր կարծել: Ահա նոյն այդ Անանիա Նարեկացուն հանդիպում ենք Մովսէսի մահից յետոյ, Խաչիկ կաթողիկոսի ժամանակ, 972—991 թուերին, Աւետանէսի Պատմութեան յառաջաբանում: ***

Այսպիսով ուրեմն՝ դարի վերջերին ղեռնակներն էր Ան. Նարեկացին, ուստի և նա չէր կարող իրր և մատենագիր ծագել և լատին երոգիս կղբն երին:

* *

Մեր այս գիտողութեանց հիման վրայ՝ ստանում ենք հետեւեալ շարքը տասներորդ դարի նշանաւոր գրողների, մի քանի հաստատուն թուականներով:

— Գարի առաջին կիսում՝ Յովհաննէս կաթ. և Թովմա Երծրունի:

— Երամ, Խոսրով Անձեացուց առաջ:

— Խոսրով Անձեացի, եպիսկոպոսանում է 941-ից յետոյ, Գրում է ժամագրոց Մեկնութիւն և Մեկն. խորհ. ս. Պատարարի Վերջին գրութիւնը՝ 950 թուին: **** Եպիսկոպոսում է կաթողիկոսից 954-ին, Մեռնում է 965-ից առաջ:

* Այսինքն Նարեկի վանական:

** ի՞նչ ժամ վախճանի ինչո՞ւ Գրի Խոստ.

*** Ուխտ. եր. 11. Էջմ. 1871:

**** Գրում է Սահ. 951-ին եւ յետոյ՝ քննադատական

— վիճարանական գրութիւններ, որ մեր ձեռքը չեն հասնւ, բայց որոնց քովանդակութեանը ծանօթանում ենք Մովսէսի եւ Ժամատեցու թղթերից:

— Անանիա Մովսէսի կաթողիկոս 941—96 թուերին, Իւր Ա մեծ Թուղթը գրում է 958-ին Միւս թղթերը (Գ. Դ և Բ) գրուած են 954—965-ին:

— Նոյն այս 954—965 թուին է Յակոբ Կոպատեցու թուղթը:

— Այս թուերին է (954—965) նաև՝ ամենայն հաւանականութեամբ՝ Ան. Նարեկացու Խոստ. Գիրը, որովհետեւ Խոսրովի և Մովսէսի միջև ծագած վեճերից յետոյ կարող էր կասկած ծագել և Ան. Նարեկացու ուղղափառութեան մասին, քան որ խնամական կապեր կային սրա և Խոսրովի միջև, և Ան. Նարեկացուն էր աշակերտում Խոսրովի որդին՝ պատանի Գրիգորը, * Ան. Նարեկացու գրական գործնէութիւնը շարունակում է ղեռ երկար տարիներ, նրա Հաւատարմատ գիրքը յիշում է Խաչիկ կաթ. ի ժամանակ, այդ թուերին է յիշում և նրա Համառօտ Հայոց պատմութիւնը, **

— Ան. Նարեկացուն ժամանակակից է և Մեսրոպը երեցը, որ Վահանիկի կաթողիկոսութեան ժամանակ, 967 թուին (ՆԺԶ) գրեց իւր Պատմական երկասիրութիւնը:

— Սրանից աւելի ուշ է ժամանակով Աւետանէս պատմիչը, Խաչիկ կաթողիկոսի օրով, 972—991-ին:

— Ան. Նարեկացու աշակերտն է Գրիգոր Նարեկացին, Իւր բազմաթիւ գրութեանց մէջ տարեթիւ ունեցողներից առաջինն է երգերգոցի Մեկնութիւնը 977-ին (ՆԺԶ), Նարեկացու գործնէութիւնը ձգւում է մինչև յաջորդ դարի սկիզբը՝ 1002 թ. (ՆԺԱ), ***

— Տասներորդի վերջումն է և յաջորդ դարի սկիզբին Ասողիկը, որ և վերջացնում է իւր պատմութիւնը 1004-ին, ****

* *

Այս ցանկի վրայ կարելի էր աւելացնել աւելի մանր գրողներին, որոնց գրական ազդեցութիւնը կամ գործնէութիւնը այնչափ մեծ ընդարձակութիւն չէ ունեցել, ***** Նաև ժամանակակիցների, մասնաւորապէս Ասողիկի, յիշած բազմաթիւ գիտնականների անունները, այլ և մեր այս հրատարակութեան մէջ հանդիպածները, յիշում Մովսէսից, ինչպէս են օրինակ՝ Եղբայրիկ Համա-

* Համեմատել Ան. Նարեկացու Թոնտրակեցիների ղեռ գրելը ղնում է 945 թուին: Բ, եր. 887:

** Ուխտանէս, եր. 41—42:

*** Յիշատակարան Նարեկի:

**** Տես Ստ. Մախատանի ընտիր հրատարակութիւնը, Ս. Պետ. 1885, յառաջաբան:

***** Տես Էրն Դպ. Զարք. 551, 549:

պատկան, Բասիլիոս, * Գէորգ Կաղաթեցի, Խոսարով Գիտնական, Գէորգ Տարոնացի, Սահակ Գարբնորդի, Ստեփանոս Քերական և ընդ որոնց/ց սակայն մեր ձեռքն հասած գրութիւններ չկան:

Մատենագրութեան քննադատական պատմութեան համար նշանակութիւն ունին ոչ միայն Մոկացու ճիշտ թուականները, որոնց հիման վրայ հետաւոր է բաւականաչափ ուղղել և լրացնել մեր ծածկութիւնները տասներորդ դարի վերաբերութեամբ, այլ և այն պատմական, եկեղեցական և մանաւանդ կանոնական գրութեան յիշատակութիւնները, որ ցրուած են նրա Թղթերում:

* *

Լեզուի կողմից Մոկացին իրմնարան է, իւր ժամանակակիցների և դասակիցների նման սիրում է բառերի սովեւտական կուտակութիւն և տարօրինակ բարդութիւններ, շատ է սիրում մանաւանդ իրեն յատուկ «գոյ ասել» ասացուածքը, Հատ տեղեր էլ պէտք է նկատարել, որ ընագիրը աղծատուած է անհմուտ ընդօրինակողներից: Անբաւական և գրչաւոր ջանքն է եղել, ուժերս ներածին չափ, վերականգնել ընագիրը, տալով միանգամայն ընթերցուածների ընդ որ տարբերութիւնները: **

* *

Մեր այս հրատարակութեանը ծառայել են երկու ձեռագիր, 1890-ից մինչև օրս մեր ջանքերը ձեռք բերել այս երկու ձեռագրերի նախնական մայր օրինակը կամ մի ուրիշ օրինակ՝ ընագրի մի քանի թերթները լրացնելու համար, առանց հետեւանքի անցան:

Հրատարակութեան մէջ ձեռագրերը նշանակուած են Ա և Բ տառերով, նշանակուած են նաև երեսները և սիւնակները: ***

Ա-ը Գէորգեան Յուցակի № 58-ն է, Ընդհանրական Ներս. Հնորհայու, զանազան թղթեր և վերջում Մագիստրոսի թղթերը, Կաշեկազմ, թուղթ, նօտագիր, երկու սիւնակով, 2-ի մեծութիւնը 21 × 16 հրմ., ընդամենը 291 թերթ, Յիշատակարաններն են:

1a երես. «Եւ օրինակեցաւ ի հայրապետութեան տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, ՌՄԺՁ. թուող, մայիս Է»:

* Այս Բասիլիոսը հաւանականօրէն Ասողկի յիշած Բասիլիոս ծերունին է, եր. 178:

* Ընթերցուածների մէջ շատ տեղ պատուազրութիւնը նարատր չեղաւ նշանակել եւ ոչ էլ գաղափարագրերն ու լինան նշանները, մեր տպարանի միջոցների ազդատունեան պատճառով:

* * Ա կամ Բ անկիւնաւոր փակագծերի մէջ, առանց ռազմաւոր ցոյց են տալիս մի երեսի (Ա կամ Բ ձեռագրի) երկու սիւնակների բաժանման կէտը:

8b եր. կնիք «Բրիստոսի ծառայ Արարհամ վարդապետ»:

9a եր. նօտագոյն եպիսկոպոսական կնիք, մասամբ ջնջուած:

9b a կիսեղծ կնիք, որ խոշորացոյցի օգնութեամբ կարգում եմ այսպէս. «Բի ծառ Խաչատուր վարդապետ ՌՃՂ. Յիշատակարան. «գիրքս այս է Ուսումնարան վարդապետին, որ ինքն է ձեռամբ այլ գրել մի ըստ միջոց» Նօտր գրով նշանակուած բառերը քերուած յատակի վրայ են գրուած ուրիշ ձեռքով: Քերուած գրերի հետքերի և խոշորացոյցի օգնութեամբ վերականգնուած է նախնական յիշատակարանը այսպէս՝ «գիրքս այս է Կոստանդնուպոլսեցի Խաչատուր վարդապետին, որ ինքն իւր ձեռամբ գրեաց մի ըստ միջոց»:

99a եր. ներքեի լուսանցքում, աչքի չգարնող տեղում, ուստի և անշմարելի մնացած յիշատակարաններ կեղծող Աստապատցուց. «Խաչատուր վարդապետի, ի քաղաքէն Պոլսոյ մեծի, որ զգիրքս զայս գրեցի, որ ընթերցուի տուր ողորմի, ի ՌՄԺԳ թուին»:

291a եր. «ի վայելումն Աստուծոյ զիւր մեղապարտ իւր զիւր վարդապետին անուամբ և ոչ գործով, ի թուող ՌՄԺԷ»: Նօտր գրով բառերը, վերեւի նման, քերուած յատակի վրայ են, նախնական յիշատակարանն է մօտաւորապէս հետեւեալը. «ի վայելումն Կոստանդնուպոլսեցի . . . մեղապարտ, իւր Խաչատուր վարդապետին անուամբ և ոչ գործով, ի թուող ՌՄԺԷ»:

Այս յիշատակարաններից հետեւում է, որ Ա-ը գրուած է Կ. Պոլսեցի Խաչատուր վարդապետի ձեռքով, հաւանականաբար Պոլսում և ոչ Էջմիածնում: * 1765—1767 թուերին:

* *

Բ-ը Գէորգ. Յուցակի № 100 է, ամեն բանով յար նման Ա-ին, միայն ոչ այնչափ ստուար ունենալով ընդամենը 154 գրուած թերթ, Բովանդակութիւնն է «Ենանիս Հայոց վարդապետի Բան Հակաճառութեան ընդդէմ երկարնակաց» (= Սանահնեցի) և Թղթեր, Անթուական յիշատակարանն է:

153b եր. «Արդ գրեցաւ գիրքս ձեռամբ մեղաւորաւ Կաշեկա երիցու ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլսի ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ եկեղեցոյն, աղաչեմ զընթերցող հայրքս անմեղադիր լինել մերոյ պակասութեանս, զի օրինակն խիստ

* Այս ձեռագրից օգտուողները, չեն նկատել քերուածները եւ կարծում են, թէ ընդօրինակութիւնն եղած է Էջմիածնում: Զուգործ մեզ Հետաքրքրող ինչ ինչ մասերը մի կամ մի քանի անձանքի գրիչների ծերով են ընդօրինակուած:

խրթին եղծուած էր. միով հայր մեղայիւ [խնդրեմ յիշել] զանարժանս. և դուք յիշեալ լիջիք ի միւս-անգամ գալստեանն :

Ա և Բ ձեռագրերը չեն կարող ընդօրինակուած լինել մէկը միւսից, այլ երկուսն էլ, միմեանցից անկախ, ընդօրինակուած են Պօլսի հին «խիստ խրթին եղծուած» օրինակից, ունենալով մի և նոյն պակասները, բայց մէկը միւսից՝ աւելի կամ պակաս բառեր, յաջող կամ անյաջող ընթերցուածներ, երկու գրիչների (Խաչատուր վարդապետ և Աուկաս երէց) ուշադրութեան և գիտութեան չափի համեմատ :

Այսպիսով՝ մեր այս երկու օրինակները իրար լրացնում և սրբագրում են :

Երկուսն էլ շատ սղագրութիւն և սխալ ընթերցուածներ ունին, Ա-ը շատ զգուարութեամբ է վերծանուում, Բ-ը աւելի զիւրընթռնելի է :

Այս մեր հետազոտութիւնից ուրեմն հետեւում է, որ Ան. Մոկացու Թղթերի մայր օրինակը, որից ընդօրինակութիւն են մեր Ա և Բ ձեռագրերը, 1765—1767-ին եղել է Վ. Պօլսում : Ո՞րտեղ է արդեօք գտնուում այժմս :

* *

Այս թուերին, այն է 1765-ին և 1766-ին (ՌՄԺԳ—ՌՄԺԵ) Անանիայի Պատմութեան, այսինքն է Թղթերի, յիշատակութեան հանդիպում ենք Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանում : Ահա մեզ հետաքրքրող հատուածը.

— «Յղեաց [Սիմէոն կաթողիկոս] ևս ի ձեռն տեղապահին [ի Թիֆլիզ առ արքայն Արաց Հերակ] զպատմագիրս ոմանց՝ զԱղուանիցն և զՍիւնեացն և զԱնանիա կաթողիկոսին, զԿիրակոսին և զՄատթէոսին, զի ծանուցեց նորք, թէ որպէս ի Լուսաւորէն հետէ հնազանդք են լեալք կաթողիկոսն Աղուանից՝ աթոռակալաց նորին և Աթոռոյ, Որք և արքեպիսկոպոսք են անուանեցեալք. և զիւրք ի հետիւն յոմանց յայնցանէ պատժեցեալք են ի նոցանէ արժանահաս պատուհասիւ և թէ որպէս ի վերաուղղիլն դարձեալ ի նոյն կանոն հնազանդութեան՝ տուեալ են յիւրաքանչիւր ժամանակս զձեռագիրս նշովիւք մի ևս հետիւլ յԱթոռոյ սրբոյն Գլխորդի, * Մեր երկու օրինակներից

* Տես Յիշատ. Սիմէոն կաթ. Գիւան Հ. Պատմ. գիտք գ. Թիֆլիս, 1894 եր. 415. Սիմէոն կաթողիկոսի և Աղուանից արքայէլ կաթողիկոսի վէճերի ժամանակ Հիմնածնում աշքի առաջ են ունեցել և Անանիայի Թղթերը, ահա մի ուրիշ վկայութիւն 1765 թուից. «Հանգի ի բաժանիլն վրաց ի չայոցս միաբանութենէ՝ քաղմիցս անգամ ընդվիշտան և Աղուանք, որպէս յաւուրս տեսան Արքայաժողով, Եղիայի, և Գէորգայ կաթողիկոսացն մերոց: Նոյնպէս ևս յառաջ տեսան Անանիայի Մոկացու յմիջ ապատմութե-

1765—66 թուին Էջմիածնում կարող էր լինել անթուական Բ. օրինակը, որովհետեւ Ա-ը այդ թուերին նոր էր ընդօրինակուում Վ. Պօլսեցի Խաչատուր վարդապետից և 1767 թուից յետոյ միայն կարող էր անցնել Աստապատցի Արքահամ վարդապետի ձեռքը, Յիշուում է այդ թուերին մի «Արքահամ վարդապետ նուիրակ», որ առաջնորդ էր ըջմիւռնիայում, ՌՄԺԲ-թուին Պօլսումն էր ՌՄԺԳ թ. մարտ ամսին արգէն Էջմիածին է վերադարձած, * Արդեօք այս Արքահամը և Արքահամ Աստապատցին չե՞ն միևնոյն անձնաւորութիւնը, նուիրակ Արքահամ վարդապետը լաւ ծանօթութիւններ ունենալով Վ. Պօլսում, շատ զիւրութեամբ կարող էր ձեռք բերել 1767-ից յետոյ Խաչատուր վարդապետի արտագրած օրինակը (=մեր Ա-ը) :


Նոյնպէս արժանի է ուշադրութեան, թէ ո՞ր կարող է մնացած լինել Արաց Հերակ թագաւորին ուղարկուած օրինակը, որ հաւանականաբար մի արտագրութիւն էր մեր Բ օրինակից, եթէ սակայն 1766-ին Էջմիածնում չկար՝ մեզ անծանօթ՝ աւելի հնագոյն օրինակ :

Սիմէոն կաթողիկոսը յիշում է Մոկացուն նաև մի քանի զիտողութիւններում, որ իւր ձեռքով գրել է նա մեր գրատան № 1721 ձեռագրի մէջ (Պատմութիւն Աղուանից, նոտրգիր), **

Ահա այն բոլորը, ինչ որ յաջողուեց մեզ ձեռք բերել այս հետազոտութեամբ Մոկացու ձեռագրերի մասին, Ամենից աւելի ցանկալի էր Վ. Պօլսի մայր օրինակի գիւտը :

Գալուստ Տ. Մկրտչեան.

5 մարտի 1897.



ցան դարձեալ՝ զնաց նա անդ ի միապետիւ զնոսա: Իսկ ինդրեալ էր անդ զՊատմութիւն Աղուանից, զի գիտասցէ զորպիսութիւնս Աթոռակալացն նոցին, թէ որպիսի կերպի նազանդք լեալ իցեն նոցա Աթոռոյ սրբոյն Գրեգորի: Իսկ նոցա թագուցեալ էին զայն ի նմանէ: Եւ յաւուր միում ի ժամ գիշերային աղօթքնս եղեալ էր եկեղեցականս զգիրս առաջի նորա եւ մեծարեալ էր ընթեռնուլ, որպէս թէ զիցք Ոսկեբերանին իցէ: Եւ նորա քացեալ զայն գտեալ էր զոր ինդրէրս զնոյն ինքն Պատմութիւնս Աղուանից: Նոյն տեղը եր. 559: Տես և Ուռայեցի, Օրբելեան, Կիրակոս Գանձակեցի:

* Նոյն տեղը, եր. 54, 44, 70, 151, 258 եւլն:

** Տես խաչ վարդապետի յօդուածը «Նիւթեր Աղուան. Պատմ. Աստուծ. համար» : Երարատի այս համարում: